



Տարեկան գինը 10 ռուբլի կես տարվան 5 ռուբլի
Առանձին համարները 5 կոպեկով:

Թիֆլիսում գրվում են միմյանից խորագրատան մէջ:

Մեր հասցեն. Тифлис, Редакция «Маска».
Կամ Tiflis, Rédaction «Mschak».
Տ է լ է Ք օ շ Ն 253.

Խոսքերով թիւերը բաց է առնուածին 10—2 ժամ
(բացի կիրակի եւ առաջ օրերից):

Յայտարարութիւն ընդունվում է մինչև լեզուով:

Յայտարարութիւնների համար վճարում են
խոսքերով տողական 10 կոպեկ.
Տ է լ է Ք օ շ Ն 253.

ՀԻՄՆԱԳԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐԱՅԻՆ

ԲՈՎԱՆԴԱՌՈՒԹԻՒՆ

Հողագործի մասին հոգատարութիւն.— ՆՆԲ-
ԳԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Գիւղացին ուսումնարան
չունի. Նամակ Բաղրամյանից. Նամակ Խմբա-
գրութեան. Ներքին լուրեր.— ԱՐՏԱՔԻՆ ՏԵ-
ՍՈՒԹԻՒՆ. Նամակ Գարսեանյանից. Արտա-
քին լուրեր.— ՀՆՈՒԱԳԻՐՆԵՐ.— ՅԱՅՏԱՐԱ-
ՐՈՒԹԻՒՆՆԵՐ.— ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ. Ցուցահան-
դէսը:

ՀՈՂԱԳՈՐԾԻ ՄԱՍԻՆ ՀՈԿՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

Թիֆլիսում, երեքշաբթի օր, Հոկտեմ-
բերի 23-ին, բացվեց դարձեալ մի ժողով,
որ վերջինն է այն ժողովների շարքում,
որոնք տեղի ունեցան Թիֆլիսում Կովկա-
սեանց ցուցահանդէսի առիթով:

Նախորդ ժողովներում քննարկեցին կաթ-
նամանուկութեան, անասնապահութեան,
անայնագործութեան, այգեգործութեան
և գինեգործութեան խնդիրները: Ներկայ
ժողովում պէտք է քննարկեն այն բոլոր
հարցերը, որոնք կապ ունեն դաշտային
անտեսութեան և հողագործութեան հետ:
Ներկայ հողագործական ժողովի առա-
ջին նիստում յարուցվեց մի կենսական
հարց, այն է, թէ ինչպէս մատակարար-
ենք մեր հողագործ ժողովրդին սերմա-
ցու իր դաշտերը սերմանելու համար:

Երբ երկու տարի առաջ Ախալքալաքի
գաւառը պահանջ ունէր սերմացուի, թէ
տեղական վարուժիւնը և թէ մասնագէտ
գիւղատնտեսները չը գիտէին, որտեղից
վերջինն այդ սերմը: Նոյն վիճակի մէջ էին
վերջին տասնեակ տարիների ընթացքում
Գանձակի, Թիֆլիսի և Երևանեան նա-
հանգների շատ տեղեր, իսկ այս տարի
Սևնախի գաւառը, որ բերել տուեց իր
համար աշնանայանի սերմեր Կարսի նա-
հանգի հարաւարմամտեան գիւղերից:

Ուրիշ տեղերից բերած սերմերը կարող
են լինել և աջող և անաջող: Ի հարկէ,

երբ փորձը աջող է՝ կարելի է միայն ու-
րախանալ, բայց երբ անաջող է՝ այն ժա-
մանակ խորհրդատուների վրա ծանրա-
նում է մի մեծ պատասխանատուութիւն:
Եւ անկասկած շատ ցաւալի է, որ
անաջող դէպքերի թիւը փոքր չէ մեր
գիւղական շրջանում:

Որպէս զի գիւղական ժողովրդի վիճակի
հետ խաղեր չը խաղանք և նրա տնտե-
սութիւնը փտանգի չենթարկենք, մենք
պարտաւոր ենք լուրջ կերպով ուսումնա-
սիրել, թէ մեր երկրի այս և այն տեղի
հացահատիկը որ տեղերի համար կարող
է պիտանի լինել և սերմելուց յետոյ ապ-
արդիւնաւոր հետեւանքներ: Բայց այդ
հիմնական և խոշոր հարցից, անկասկած,
կարեւոր է, որ առհասարակ մի շարք ցու-
ցումներ մշակվին մեր հողագործին ա-
ռաջարկելու աւելի լաւ և բեղմնաւոր
սերմացուներ:

Եթէ հողագործական ժողովին աջողվէր
յարուցված հարցին տալ գործնական ի-
րադրութիւն, նա կը տար վարչական
մարմինների և գիւղատնտեսների ձեռքը
միջոց օգնութեան գալու մեր գիւղացի-
ներին այն դէպքերում, երբ նրանք որո-
նում են լաւ սերմացուներ իրանց դաշ-
տերը սերմանելու համար:

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԳԻՒՂԱՑԻՆ ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆ ՉՈՒՆԻ

Գիւղական ժողովրդի բարեկեցութիւնը եւ
ինքնահասնայութիւնը զարթոյնելու միջոցնե-
րից մէկը պիտի որոնել ուսումնարանների
թիւը շատացնելու ձգտման մէջ: Բայց մենք
չունենք ձեռնարկողներ, չունենք օգնողներ,
չունենք նոյն իսկ ցանկացողներ այդ հանրո-
գուտ միտքը տարածելու հարկաւոր չըլաննե-
րում: Անշուշտ են այն ժամանակները, երբ գիւ-
ղերում միակ գրագէտները Սաղմոս եւ Նա-

րեկ կարդացող տիրացուներն էին, երբ գիւ-
ղացին բացի «բարեւագիրն ու սանաղդ» գրա-
կանական ուրիշ ճիւղերի մասին գաղափար
չունէր, երբ նրա մաքի հորիզոնը իր քահա-
նայի իմացածից հեռուն չէր թափանցում: Ան-
ցիլ են այն տարիները, երբ հողը շատ էր եւ
տալիս էր առատ բերք, երբ կենսքը չունէր
արդի բարդ պահանջներ, երբ հարկերը թե-
թեւ էին:

Այժմ յոյս դնել հողից ստացած արդիւնքի վրա
գիւղացին չէ վստահանում. նա ստիպված է
փոքր ի շատե՛լ ապահով կեանք վայելելու համար
ճանապարհ հարթել ուրիշ միջոցներով: Կարեւոր
եւ ուսումով, որոնց նշանակութիւնը նա լաւ է
հասկացել: Գիւղացին շատ է ցանկանում ու-
նենալ ուսումնարան, բայց միջոցներ չեն նե-
րում որդուն «գիր» սովորեցնելու: Նա այժմ
որբաւութեամբ զոհւում է վերջին կոպէկները
այդ բարենպաստ գործը իրականացնելու հա-
մար, իմանալով, որ ուսումը իր որդու ապա-
րայ կենքի յենակէտներից մէկը կարող է
լինել: Մինչդեռ մեր կրթական հարկները
վստմութեամբ են արտասանմանում կանանց նոր
տարազի հագուստի, ջալամի թանգագին փե-
տուրների, վառվառն աղամանիցայ մատանի-
ների վրա, աղքատ գիւղացին կոպէկներ է
ժողովում լոյսի եւ գիտութեան տաճար կա-
ռուցանելու: Բայց շատ կան կոպէկաւոր գիւ-
ղացիներ: Ո՛հ, հարկաւոր է հասկացնել չիմա-
ցողին: Խրախուսել, նպաստել, օգնել գիւղա-
ցուն ներթափալ եւ բարոյապէս. հարկաւոր է
ջանք գործ դնել նրա ցանկացած ուսումնա-
րանների թիւը շատացնելու, նրանց կից արհես-
տանոցներ շինել, գիւղատնտեսական գիտելիք-
ներ սովորեցնել:

Բանի որ Հիւսիսային Կովկասը եւ Գոթթա-
լիսի նահանգները ծածկված են ուսումնարան-
ների մի խիտ ցանցով, Անդրկովկասի մի քա-
նի գաւառներում գիւղական ուսումնարաննե-
րը կարելի է մատնեթով համարել: Վերջինե-
ր, որինակի համար, Սուրմալուի, Եւրոպայի, Ջիբ-
րալթի, Ջիվանջիի եւ այլ գաւառները, որոնք

շատ աղքատ են ուսումնարանների թուով,
Չանգեզուրի պէս մի լայնատարած գաւառ, որ
իր տարածութեամբ յետ չէ մնում միջին Ռու-
սիայի կամ Լեհաստանի նահանգներից, ունի մի-
այն ինչ տարրական դպրոց: Այս գաւառում կան
բազմամարդ եւ միանգամայն մոռացված գիւ-
ղեր, ինչպէս են Երկաշող, Ագարակ, Եղվարդ,
Խոջանան, Ղարաղլաղ, Թուրք Ալիզուլի եւ
այլ գիւղեր, որոնց ներկայումս անհրաժեշտ է
ունենալ ուսումնարաններ:

Ի հարկէ, ցանկալի է, որ ուսումնարանները
լինէին երկդասեան, որպէս զի աւարտող աշա-
կերանները ունենային համեմատաբար մտաւոր
մեծ պաշար եւ շուտով չը մոռանային սովո-
րածը, ինչպէս լինում է միդասեան ուսում-
նարաններում աւարտողների հետ: Բայց երկ-
դասեան ուսումնարանը պահանջում է գիւղա-
ցուց մեծ ծախսեր, ուստի նա հարկադրված է
լինում դիմել քաղաքացիական հարուստ համա-
գիւղացիներին, որոնցից շատերը չեն զլանում
օգնութեան ձեռք մեկնելու: Այս դէպքում շնոր-
հակալութեան եւ ուշադրութեան արժանի են
իրանց ցոյց տուած բարի եւ ազգօգուտ գործի
համար զանգեզուրցի բազմաթիւ ա.պ. Գաս-
պար Տէր-Մարգարեան եւ Գրիգոր Ապրէ-
սեան: Այս պարոններից առաջինը հիմնում է
իր հայրենի Երվանդ գիւղում երկդասեան
աղայոց եւ օրիորդաց ուսումնարան, խոստա-
նալով ցմահ հոգալ ուսումնարանի ծախսերը,
իսկ երկրորդը նոյնպէս հիմնում է իր հայրենի
Ղարաղլաղ գիւղում երկդասեան ուսումնա-
րան, որի չինութեան համար գիւղացիների
տրամադրութեան տակ է դնում 7—8 հազար
րուբլի:

Կը ցանկանք, որ ա.պ. Տէր-Մարգարեանի
եւ Ապրէսեանի օրինակին հետեւէին միւս ու-
նեւոր եւ ձեռնհաս անձինք եւ օգնութեան
ձեռք մեկնէին իրանց համագիւղացիներին՝ ա-
զատելու նրանց ապագայի անկ զրութիւնից:

Եփր. Մելիք-Շահնազարեան

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՑՈՒՑԱՀԱՆԴԵՍԸ

XVII

Նաւթային արդիւնագործութիւնը

Խօսելով նաւթային արդիւնագործութեան
մասին, մենք մինչեւ այժմ աչքի առաջ ու-
նենք գլխաւորապէս նրա արտաքին կողմը,
որի առաջնակարգ դերակատարներն էին նաւ-
թային էտուրները:—Կապիտալիստները: Բայց
որքան էլ որ մենք կապիտալիստ մտացվեւն գոր-
ծի մէջ, որքան էլ որ կատարելագործվի տեխ-
նիկան, այնու ամենայնիւ նաւթահանքերի ա-
ջողութիւնը զգալի չափով կարված է այն
կեղտոտ ու անպաճոյճ էակներից, որոնք յայտ-
նի են «բանուորներ» անունով: Իւրաքանչիւր
հանքատիրոջ համար բանուորները աւելի մեծ
անհրաժեշտութիւն են կազմում, քան թէ չո-
գեկաթեան ու մեքենան, քան թէ նաւթային
ամբողջ գործարանը, որը միայն բանուորների
խելով ու ջուտ ձեռքբերով է կենդանութիւն
ստանում:—չարժուած:

Դժբաղդաբար հանքատերերից շատ քչերն
են հասկանում այդ իրողութիւնը եւ հասկա-
ցողներն էլ միայն պալլիտալով միջոցներով են
իրանց պարագը կատարում: Եւստերի համար
նաւթահանքի եւ գործարանի անշուշտ իրերի
աւելի մեծ խնամքի են արժանի, քան թէ
չարժուած էակները:—բանուորները: Երբ բանու-
րը հիւանդանում է, թէեւ նրան հնարաւորու-
թիւն են տալիս ձրի բժշկվելու, բայց բաւա-
րանանում են միայն դրանով եւ այնուհետեւ
նրա վիճակը թողնում են անգուլթ բաղդի հա-
ճոյքին:

Երբ բանուրը մի օր եւ է դժբաղդ դէպքում
զրկվում է աշխատելու ընդունակութիւնից,

կորցնում է իր ձեռքը, ոտքը կամ տեսողու-
թիւնը, այն ժամանակ հանքատէրը միայն մի
չնչին գումար է տալիս եւ վտանգված բան-
ուորին հեռացնում, թողնելով որ նա իր ամ-
բողջ կեանքում սովից տանջվի, կարիքների
լծի տակ հալ ու մաշ լինի...

Երբ բանուորն իր աշխատանքը կատարելիս
յանկարծառիւս մահ է տեսնում, այն ժամանակ
էլ նրա ընտանիքն է մնում թշուառ ու անօգ-
նական վիճակի մէջ, նրա անմեղ զաւակներն
են դեղերում աղքատութեան ճանկերում:
Հանքատիրոջ փոխին էլ չէ այդ ցաւալի վիճա-
կը: Նա մտածել անգամ չէ ուզում այդ ան-
մեղ զոհերի մասին: Նրան հարկաւոր էին աշ-
խատող ձեռքերը. չը կան այդ ձեռքերը՝—չը
կայ եւ ոչ մի պարտականութիւն նրա համար:
Անա այդքան վատ է բանուորների դրութիւնը
նաւթային աշխարհում:

Բայց բանուորները վատ վիճակի մէջ են ոչ
միայն մեղանում, ոչ միայն նաւթային աշ-
խարհում, այլ եւ ամենուրեք, նոյն իսկ քաղա-
քակրթի երկրներում: Անգլիան իր հարստու-
թեամբ առաջին տեղն է բռնում, սակայն նրա
աշխատաւոր դասակարգը միայն այդ հարեա-
տութեան փշրանքներն է վայելում: Տնտեսա-
գէտ Գոսսման *) ասելով՝ Անգլիայի ազգաբնա-
կութեան տարեկան եկամուտը հասնում է
1,300,000,000 ֆունտ ստերլինգի, որը բա-
ժանված է այսպէս.

Հողավորձ	200,000,000 ֆունտ
Տոկոսներ	250,000,000 »
Օգուտ	350,000,000 »
Օրավորձ	500,000,000 »
1,300,000,000	

Այդպէս ուրեմն ամբողջ գումարից միայն
500,000,000 ֆ. է աշխատաւոր դասակարգին

*) Дон. Гобсон: «Проблемы бытности и бедра-
боты».

բաժին ընկնում, թէեւ դրանց աշխատանքն է
այդ ամբողջ եկամուտի իսկական աղբւրը, թէեւ
դրանց զուտ քրտինքն է անտեսական կեանքի
զխաւոր գործուն: Մնացած գումարը վայե-
լում են մանր ու խոշոր կապիտալիստները
եւ կալուածատէրերը: Այդպիսի պայմաններում
այդ հարուստ երկրում էլ աղքատութիւնը բա-
ցառիկ երեւոյթ չէ կազմում: Նրա 38 միլիոն
ազգաբնակչութիւնից միայն 11 միլիոնն է ու-
նեւոր: Բուտար ասելով՝ Լոնդոնի բնակիչների
35% ամենաաղքատ վիճակի մէջ է: Միայն
1890 թւականին 31 հոգի մեռել են սովից:

Անհաւատարմութեան նոյնպիսի երեւոյթներ
նկատվում են նաեւ ուրիշ երկրներում: Ֆրան-
սիայում, Բելգիայում, Ամերիկայում, Գերմա-
նիայում եւ այլն. իբրեւ ապացոյց բաւական
է կարգալ Վուրմի աշխատութիւնը—(«ВУРМ
НЕМЕЦКИХ РАБОЧИХ»), որի մէջ միմանց ե-
տեւից այնուհետ են գերեզմաններ բանուորների
կեանքից վերցրած մտայն եւ մաթ պատկեր-
ները:—Նրանց ապրուստը, բնակարանները, հի-
ւանդութիւնները, սնունդը, տնտեսութիւնը եւ
այլն...

Բայց պէտք է աչքի առաջ ունենալ, որ
արտասահմանեան բանուորների վիճակը վատ է
միայն տեղական պայմանների ու միւս դասա-
կարգերի համեմատութեամբ: Իսկ եթէ նրանց
համեմատելու լինենք մեր կովկասեան եւ մա-
նաւանդ նաւթահանքերի բանուորների հետ,
այն ժամանակ կը տեսնենք, որ նրանք իրանց
կալուածական պահանջներով, իրանց նիստ ու
կացով եւ մտաւոր կրթութեամբ անչափ բար-
ձր են մեր բանուորներից եւ ամենայն իրա-
ւամբ վերջիններս «աղաները» կարող են հա-
մարվել:

Արտասահմանեան բանուորների մէջ չափա-
զանց զարգացած է ընկերական օգին, այդ
պատճառով էլ նրանց կազմակերպութիւններն
օրէցօր բազմանում են եւ անդամների թիւը

մեծանում: Դեռ 1898 թւականին կազմակերպ-
ված բանուորների թիւը հասնում էր *):

Անգլիայում	1,644,591 հոգի
Հիւսիսային Ամերիկայում	1,000,000 »
Գերմանիայում	700,000 »
Ֆրանսիայում	419,761 »
Աւստրո-Ունգարիայում	105,855 »
Եվրոպայում	174,181 »
Բելգիայում	70,000 »
Հոլանդիայում	126,669 »
Դանիայում	96,295 »
Նորվեգիայում	24,000 »
Եվրոպայում	50,000 »

Պարզ է, որ կազմակերպութիւնների շնորհիւ
արտասահմանեան բանուորները կարողանում
են միմեանց փոխադարձ օգնութիւն հասցնել,
ընդհանուր շահերը պաշտպանել եւ այդպիսով
իրանց համար աւելի բարեւոք վիճակ ստեղծել:
Մեր բանուորները գուրկ են այդ միջոցի,
չըլապատող օտջայական պայմաններն էլ աւելի
վատ են, ուստի եւ նրանց համար ստեղծվել է
մի աննախանձիկ դրութիւն, որի մոայլ պատ-
կերը ցնցում կարող է առաջացնել ամեն մի
զգայուն սրտում: Սակայն դիմենք փաստերին:

Նաւթային արդիւնագործութեան զարգաց- ման հետ զուգահեռաբար մեծանում է տեղա- կան բանուորների թիւը: Իբրեւ ապացոյց վեր- ցնենք վերջին հինգամսակը:	
1896 եղել է 92 ֆիրմա 8176 բանուորներով	
1897 » 100 » 10952 »	
1898 » 140 » 13705 »	
1899 » 180 » 16895 »	
1900 » 167 » 21253 »	

Այդպէս ուրեմն հինգ տարվայ ընթացքում
բանուորների թիւը գրեթէ երեք անգամ աւե-
լացել է: Դա միայն նաւթահանքերի բանուոր-
ների թիւն է, եթէ վերջինեք գործարանական
բանուորներին էլ, այն ժամանակ աւելի մեծ

*) Prof. W. Sombort: «Dennoch!».

ՆԱՄԱԿ ԲԱՆԱԽԱՆԻՑ

Հոկտեմբերի 13-ին
Մասնաժողովը քվեարկեց և որոշեց: Ապրիլի 1-ին
թվականը վրա ապաստանած աղքատ դա-
սակարգի դրուժինը ձևավորված այս մասնաժողով-
որին առկա վաղեմի անդամներն է: Տեղական
հասարակութունը ինչպես էլ անապատով կա-
ցուցեման մէջ լինի, այնու ամենայնիւ որպէս
պայմաններին ծանօթ տարր, քարշ կը
տայ իր գոյութիւնը: Մեզ համար այժմ առկա
կենսական, աւելի ուշագործ մի հարց կայ,
ինչ կանէ այստեղի թիւրքահայ գաղթականը,
մերի, սոված որբերը, հայրենի օջախից զըր-
կված եւ մեզ մօտ ապաստանած թիւրքահայ
կիներ:

Նա կարող է դիմանալ մուրալով այս ձմե-
ռային օրերին, միթէ այժմ էլ նա պիտի
դռնէ դուռ մուրալ իր եւ որբերի օրական
հացը գտնելու: Անցաւ 5—6 տարի. արեան
հոսանքները ազատված ժողովուրդը իր փըր-
կութիւնը Կովկասից անանախա յայտնով ունե-
ցածը մէջքին շարական եկաւ. դէպի մեզ: Սո-
ված, երկար տարիներով թրջակայն վերջին որ-
ծի տակ տանջված ժողովուրդը որքան վառ
յոյսերով էր գալիս դէպի մեզ. նա փախչում
էր ազատվելու գաղափարներէն, այն յոյ-
սով, որ իր եղբայրակիցները կը վերականգ-
նենք իր քայքայված անտեսութիւնը եւ
դարձնալ իր հողի յոյսով կը վերադառնայ
հայրենիք:

Այն, ինչ որ աչքից հեռու է՝ սխալ եւ ա-
նապատական է մեզ համար. պէտք է տեսնել,
զգալ եւ այնուհետեւ մտածել ու հոգալ: Տե-
սաւ կովկասցին, ունի եւ զգալ, բայց որ ա-
մենապակասըն է՝ որքան մտածեց եւ հոգ տա-
րաւ: Միջոցներէ քաղաքը, որ կայծակի ա-
րագութեամբ իւրացնում է եւրօպական քա-
ղաքակրթութեան այն մասը, որ մարդկանց
միայն շնչեղ գիտէ, մի քանի տարի շարու-
նակ տեսնում էր թիւրքահային այն խղճալի
դրութեան մէջ, որ շատ օտարների դրութիւն էր
շարժել: Նա իր մարդկային պարտականու-
թիւնները կատարած էր համարում՝ մի քանի
կօպէկներ չարեւիով առաջին պահանջներէ.
հայ կիներ, որ իր տուալէտի համար հազարներ
մտնել գիտէ, կովկասեան կուրորներում
հազնվում է Պարսիկի ամենամեծ ժողովուրդը,
որ օտարները նրան հայուհի լինելն անգամ
չիմանան՝ տեսաւ շատ որբեր, տեսաւ թիւր-
քահայ կնոջը այս ու այն անկիւններում կուշ
եկած, արցունքը աչքերին, բայց նրան չը հե-
տաքրքրեց այս ամենը... Խորված էր թիւր-
քահայը, նրա յոյսերը Կովկասում չիրականա-
ցան: Գոյութիւնը, ապրելը, ստիպում է մար-
դուն դիմել ամենաանպայանջ միջոցներէ: Ապ-

թիւ կը տանանք, այն է 1898 թ.—18,874,
1899 թ.—մօտ 22,000, 1900 թ.—26,000 եւ
1901 թ. սկզբում—մօտ 33000 բանուորներ:
Դրանց ամենամեծ տոկոսը կազմում են հայերը
եւ ապա պարսիկները: 1899 թ. բանուորներն
ըստ ազգութեան դասաւորված են եղել այս-
պէս.

Հայեր.	5314
Պարսիկներ.	4590
Ռուսներ.	4128
Լեզգիներ.	2911
Թաթարներ.	3571
Ուրիշ ազգութ.	728

Բայց ինչպէս յայտնի է՝ բանուորական դա-
սակարգն էլ ունի իր որոշ գրադարան, ունի
որոշ աստիճաններ. կան բանուորներ, որոնք
միայն ամենապարզ, ամենակոպիտ աշխատանք-
ներ են կատարում, եւ զոր հակառակ կան այն-
պիսիները, որոնք շատ բարձր գործեր են վա-
րում: Պարզ է, որ այս վերջին դէպքում բան-
ուորը պիտի ունենայ որոշ պատրաստականու-
թիւն, մասնաւորապէս տեխնիկական որոշ վարժու-
թիւն: Ահա հէնց այդ պատճառով բանուորի
կատարած գործից կարելի է գաղափար կազ-
մել նրա զարգացման մասին: Տեսնենք ուրեմն,
թէ իւրաքանչիւր ազգութեան բանուորներն
այդ տեսակէտից ինչպիսի տեղ են բռնում:
1898 թ. թէ նախահանգների եւ թէ գործա-
րանական բանուորների թիւը հասնում էր
18,874-ի, որոնք իրանց ազգութեան ու կա-
տարած գործերի համեմատ դասաւորված էին
այսպէս.

Վարչ. մաս. եւ գրառանակ.	Հայեր	Պարս.	Ռուսներ.	Լեզգիներ.	Թաթար Ուրիշ ազգ.
Վարչ. մաս. եւ գրառանակ.	445	6	172	13	46
Հոր փորձերը 1877	3606	1000	2162	2216	172

րելու տեսնէր, որ թիւրքահային ստիպեց
մուրալ: Նա աղերսում էր ամեն մի հանդի-
պողին իրան օգնել. մեր տուածները նրան կօ-
պէկներ էին, այն էլ ահագին դժուարու-
թեամբ. եւ երբ թիւրքահայ կիներ նախօր-
վիշխանների ետեւում վաճառում էր իր պատիւը
ապրելու համար՝ դեռ մեր ինտելիգենտ կոչ-
ված դասակարգը իր «կոմսոպոլիտ» հայեացք-
ներով մտածում էր աւելի բարձր եւ հանրա-
մարդկային գործերի մասին... Ահա ինչ տուինք
մենք մեր յոյսով ապրող ժողովուրդին... Բայց
միթէ ամօթ չէ բերում Կովկասին թոյլ տա-
լու տառապել, նոյն իսկ յաւիտեան կորչել մի
ժողովուրդ, որ դեռ ապրել է ուզում. միթէ
երբէք չը պիտի հասկանանք մեր մարդկային
եւ եղբայրական պարտաւորութիւնները:

Ն. Տէր-Ղազարեան

ՆԱՄԱԿ ԽՏԱՎԵՐՈՒԹԻՒՆ

Թիֆլիս, հոկտեմբերի 24-ին
Աւելի քան հինգ տարի է արդէն, ինչ որ
ընկերներն ու աշակերտները եւ յարգողները
ստուար մի խումբ, հրաժեշտի վերջին ողջոյնը
տալով Լեւոն վարդապետ իմօլայանցին, բե-
կուած օրերով հողին յանձնեցին նրա անըն-
չացած դիակը:

Լեւոն վարդապետը այն հազուագիւտ իդէա-
լիստ համայնարանականներից էր, որոնք ի-
րանց ամբողջ կենսով գոհում են գաղափարի
ծառայութեանը եւ հասարակութեան, հարա-
դատ ժողովրդի տառապանքը դարձնում են ի-
րանց անձնական տառապանք: Ոչ միայն նրա
աշակերտները, եւ ընկերները, այլ եւ ամեն մի
մարդ, որ նրա հետ գործել է, չեն կարող մօ-
ռանալ «Գառնուկի» բարի եւ հեզ պատկերը:
Եւ այժմ էլ, մտնելով Թիֆլիսի իմօլայանցի
հանգստարանը՝ մարդ ակամայից իր քայլերն է
ուղղում դէպի անմոռաց իդէալիստի գերեզմա-
նը, ուր անպաճաճ հողակոյտի շուրջ շարուած
քարերի վրա տեսնում է անյայտ ձեռներով
վառված մոմի ու խնկի սեւացած հետքեր, եւ
հեռանում է, զգալով, որ դեռ վերջին պարտք
կայ կատարելու այդ վաղաթառած գործի վե-
րաբերումը, որ ժամանակ է արդէն նրա յա-
ւիտեանական հանգստեան տեղի վրա ձգել մի
համեստ դամբանաքար եւ նրա յիշատակին
վայել մի բարի գործով յանդիմանել նրա
անունը:

Այդ նպատակով արդէն ուղարկվել են մեզ
մի քանի նուիրատուութիւններ պ. Գեղեժն Ա-
հարոնեանի միջոցով, այն է, տիկին Վ. Բա-
նանեանից 100 ռ., պ. պ. Միքայէլ Պապալա-
նեանից 50 ռ., Իսահակ Իսախանեանից 50 ռ.,
Միքայէլ Տէրեանից 5 ռ., Արքայան Դատա-
կանից 5 ռ. եւ Կիւրեղ վարդապետ Կիւրե-
ղեանից 10 ռ.: Ընդամենը 220 ռ.:

Լեւոն Սարգսեան
Ստեփան Լիսիցեան

Արհեստանոց.	1472	149	1862	109	143	331
Մեքե. մօտ	785	220	442	114	192	53
Ուրիշ գործերի	204	67	195	187	496	28

Ընդամենը 4783 4048 3671 2585 3122 668

Առաջ բերած թուերի համեմատութիւնից կա-
րելի է եզրացնել, որ նախապէս աշխարհի
բանուորների մէջ առանձին առաջին տեղն են
բռնում իրանց կուրորայով, իրանց զարգա-
մամբ, որովհետեւ նրանք են կատարում ամե-
նաբարդ, ամենապատասխանատու դերերը:
Նրանց հետեւում են հայերը եւ ապա միւս
ազգութիւնները:

Բանուորական կրթութեան պատկերը ամ-
բողջացնելու համար անհրաժեշտ ենք համա-
րում յիշել նաեւ, թէ իւրաքանչիւր ազգութեան
պատկանող բանուորների ձր % է գրադէտ:
Հաւաքած վիճակագրական տեղեկութիւններից
երեւում է, որ հայ բանուորների 41% է գրա-
դէտ (այսինքն 100-ից—41-ը), ռուսներից—
65%, թաթարներից—10%, պարսիկներից—20%,
լեզգիներից—30% եւ այլն: Իսկ ընդհանրա-
պէս բոլոր բանուորների 23%-ն է գրադէտ:

Գալով բանուորների առողջապահական վի-
ճակին, պէտք է նկատել, որ նա միանգամայն
անտանելի է *):... Յատուկ վերլուծումից երե-
ւացել է, որ նրանց գործածած շուրք—(թէ
կուրի եւ թէ շրիտներէ)—միանգամայն վեա-
սակար է առողջութեան համար: Նրանց չնչ-
օգն էլ իր մէջ պարունակում է մեծ քանա-
կութիւն մուր, այնպէս որ a priori կարելի
է ասել, թէ նա մատուցող ազդեցութիւն կա-
րող է ունենալ շնչառութեան գործարանների
վրա: Հապա բնակարանները... Ինչ կեղծ, ինչ
հիւանդութեան միկրօբ ասես, որ չը կայ այդ-
տեղ: Հողերի թանգութիւնը մի կողմից եւ
բանուորների բազմաթիւ միւս կողմից ստեղ-
ծել են մի նախանձնիկ դրութիւն բնակարա-

*) «Труды XIII съезда нефтепромышленников».

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԻՆԻ

Մօտ օրերում Թիֆլիսով դէպի Բագու ան-
ցաւ Թիւրքիի համայնարանի պրօֆէսոր Բօննէ
իր չորս աստիճանների հետ միասին: Նրանք
Բագուից ուղևորվելու են Պարսկաստան հա-
գիտական հետազոտութիւններ եւ պեղումներ
անելու:

Կազմվել է անգլիական մի սինտիկատ, որ
աշխատում է ձեռք բերել 90 տարով «Նար-
դան» հանքային ջուրը արտադրման ուղար-
կելու իրաւունքը: Պայմանագրութիւնը, որ
կապված է արդէն հանքային ջրերի վարչու-
թեան հետ, մօտ օրերում կուղարկվի երկ-
րագործութեան եւ պետական կառավարման
մինիստրութեան հաստատութեանը:

Կանանց բարձրագոյն կուրսերի պրօֆէսոր-
ները որոշել են ուղարկել լրագիրներին հետե-
ւեալ բացատրութիւնը. «Պետերբուրգի կա-
նանց բարձրագոյն կուրսերի պրօֆէսորները
եւ դիրեկտորը ամենաանհաջողն կերպով բո-
ղոքում են այն անարժան դրաւարութեան
դէմ, որ բարդած է մեր ուսանող կանանց վրա
իշխան Միչիշեւի լրագրում (№ 78, «Պահա-
նողականի» զրոյցներ) յօդուած): Ծանաչելով եր-
կար տարիների ընթացքում մեր ուսանողու-
հիւններին, դիտելով նրանց բարեխիղճ պարապ-
մունքները եւ մաքուր վարքը՝ մենք հաւա-
տացնում ենք, որ իշխան Միչիշեւի կան-
նուագիները բացարձակ սուտ են»:

Մի քանի մահմեդական համայնքներ միջնոր-
դութիւն են յարուցել պատշաճաւոր իշխանու-
թեան առաջ, որով խնդրում են ժողովրդական
լուսաւորութեան մինիստրութեան աջակցու-
թիւնը մահմեդական տարրով ընտելեցած գիւ-
ղերում աղջիկների համար ուսումնարաններ
բանալու գործում: Այս միջնորդութեան մէջ
մտանալի է արած մահմեդական կնոջ առա-
ձին դրութիւնը, որը կօնական արգելքների
պատճառով չէ կարող սովորել նոյն ու-
սումնարանում տղաների հետ միասին: Ինչպէս
լսել է «Новостях» լրագիրը, մահմեդական հա-
մայնքների այս միջնորդութիւնը լիակատար
համակրանքի է արժանացել ուսումնարանական
վարչութեան կողմից:

Մայրաքաղաքի լրագիրները հաղորդում են,
որ Ֆրանսիական հանրապետութեան նախա-
գահ Լուրէ Ռուսաստան կը գալ առաջին
ամառ—յունիս ամսին: Նախագահը ծովով կը
գալ Պետերբուրգ, իսկ այնտեղից կանցնի Պե-
տերբուրգ եւ Մոսկվա:

Նաւերի համար: Նրանք իրանց տան ամեն
մի խոռոչը տեսնալ—բնակարան են դարձնում
եւ ձեռնառն պայմաններով քրկնով տալիս: Այդ
նեղ ու մութ խոռոչներում բանուորները թափ-
վում են միմեանց վրա առանց ուշք դարձնե-
լու առողջապահութեան եւ ուրիշ յարմարու-
թիւնների վրա: Բժ. Գ. Տէր-Յովսիմիսեան-
ցը, խօսելով մահմեդական բանուորների մա-
սին, ասում է. «Կան բնակարաններ, որոնց միակ
լուսամուտը դռան տեղ էլ է ծառայում: Դրանց
բնակիչները մի արշին բարձրութիւնից վար են
թռչում եւ վերեւ ցատկում... Կան բնակա-
րաններ, որտեղ մարդիկ եւ աւանակները միա-
սին են զուռ մտնում, հանգիստ վայելում *):...»
Նրա զինած 256 բնակարաններից 130-ը
միայն մի-մի լուսամուտ են ունեցել, 29—եր-
կու, 65—փոքրիկ ծակեր լուսամուտի փոխ-
րէն, եւ 32 առանց մի օր եւ լուսամուտի
կամ ծակի: Այդ բնակարանները ամենաանար-
կալ աղքատութեան պատկերներ են պարու-
նակում իրանց մէջ: Օրինակ, մի տան մէջ ապ-
րում են 60 բանուորներ, որոնք բոլորն էլ—
բացի մէկից—մի-մի չապիկ ունեն: Դրանցից
երեքը անկողին չունենալու պատճառով զնում
են մի ջիւղի մի տակ:

Բայց աղքատութեան աւելի սարսափելի
փաստեր կան. մի սենեակում 7 բանուոր են
ապրել, բայց նրա ամբողջ արդ ու զարդը բաղ-
կացած է եղել մի հին վերմակից, մի կտոր
խտրից եւ չորերի ցնցոտիներից: Դրան կից
մի ուրիշ սենեակում 8 մարդու համար եղել է
4 վերմակ, 4 խտր եւ 2 բարձ: Հետեւեալ սե-
նեակում 9 հոգին միայն 5 վերմակ են ունե-
ցել: Այդպիսի օրինակները անվերջ են, բայց
բաւականանալք առաջ բերածով, որովհետեւ
զբանցով էլ կարելի է պատկերացնել թշուառ

*) «Очеркъ жилищныхъ условий персидско-под-
данныхъ рабочихъ въ Баку».

Առաջին կայ 1902 թվականի յունվար ամսից
վճարված է խնայողական գանձարաններ բանալ
ժողովրդական լուսաւորութեան բոլոր միջնա-
կարգ եւ տարրական դպրոցներում, արական
եւ իգական հոգեւոր ուսումնարաններում, սե-
մինարիաներում եւ եկեղեցական-ծխական դըպ-
րոցներում:

Ժողովրդական լուսաւորութեան մինիստրու-
թեան մէջ հարց է յարուցված հրաւիրելու գիւ-
նագիրների համար կին-դասատուներ, որոնք
ոչ միայն դասաւանդէին օտար լեզուները, այլ
եւ միւս առարկաները: Սկզբնորում մտադրու-
թիւն կայ թոյլ տալ կանանց դասաւանդել չորս
օտար լեզուներում: Ֆինանսների մինիս-
տրութեան մէջ եւս հարց է յարուցված թոյլ
տալու կանանց դասաւանդել այդ մինիստրու-
թեան միջնակարգ դպրոցներում:

Մեզ հաղորդում են, որ հայ դերասանական
խումբը այսուհետեւ պէտք է իր ներկայացում-
ները տալ Թիֆլիսի Արտիստական թատրոնում:
Առաջին ներկայացմանը նա կը խաղայ «Կեն-
քի արժէքը» պիէսին: Յանկայի է, որ հետեւեալ
պիէսներն էլ վերցնած լինէին կենանցից եւ չօ-
չափում լինէին ժամանակակից հարցեր: Դերա-
սանական խումբը պէտք է ստանայ նպաստներ
կենսական կոմիտեից իւրաքանչիւր ներ-
կայացման համար 150 ռուբլի:

ՆՈՐ-ԲԱՅԱՋԵՏԻՑ ԲԵՂ ԳՐՈՒՄ ԵՆ. «Մշակի»
№ 174-ից գիտեն ընթերցողները, որ մեր քա-
ղաքի ինքնավարութեան լրագրներն ընտրել
էին երկու թեկնածուներ քաղաքի առա-
ջի պաշտօնի համար եւ որոնք առաջարկ-
ված էին նախագահութեան հաստատելու: Այժմ
այդ երկու թեկնածուներին էլ նախագահութեան
իշխանութիւնը անկարելի է համարել հաստա-
տելու եւ առաջարկել է կատարել նոր ընտ-
րութիւն: Ահա 20 օրից աւել է, որ մեր ձայ-
նակները կազմում են մասնաւոր խորհուրդ-
ներ, դիմում են այս եւ այն կողմն, որ կա-
րողանան գտնէ գտնել մի յարմարաւոր անձն
որ լինի թէ քաղաքի շահի պաշտպանող եւ
թէ հոռու պետական լեզուի: Դեռ յայտնի չէ,
թէ ով կը լինի մեր ապագայ աւագը:

ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻՑԻՑ ԲԵՂ ԳՐՈՒՄ ԵՆ. «Հոկտեմ-
բերի 15-ին Պաւլովայի թատրոնական դահլի-
ճում կայացաւ Լիսովցիների երեկոյթը: Երե-
կոյթի ծրագիրը բաղաձայնողներն էր եւ զբա-
ււղ էր ահագին բազմութիւն: Համերգական
բաժնում մասնակցում էր եւ մեր ազգակից
կոստերկոստիայի ուսանող Ե. Բաղդասար-
եանը: Երեկոյթը ընդհանրապէս շատ լաւ ան-
ցաւ եւ հանդիսականները ցրվեցին ուրախ

բանուորների աննախանձելի կենցաղավարու-
թիւնը:

Այդ երեկոյթի պատճառներից զխաւորը օ-
րավարձի քչութիւնն է: Եւ իսկապէս, բա-
նուորը լինչպէս կարող է այդ թանգութեան մէջ
կօմֆօրտի մասին մտածել, լաւ բնակարան ու-
նենալ, լաւ սնունդ ստանալ, երբ նրա տարե-
կան ամբողջ եկամուտը *) հասնում է միջին
թուով 268 ռուբլու, երբ նրա կօպէկներին կա-
րօտ է մի ամբողջ ընտանիք:
Եթէ նախապէս բանուորների օրավարձը հա-
մեմատելու լինենք միւս քաղաքների բանուո-
րական օրավարձի հետ, այն ժամանակ դերա-
դաստիքները պիտի տեսնէ Բագուին. բայց եթէ
աչքի առաջ ունենանք նաեւ տեղական թան-
գութիւնը եւ վատաբողջ պայմանները, այն
ժամանակ կը տեսնենք, որ ոչ մի առիթ չը
կայ կարծելու թէ Բագուում ոսկու հանքեր են
փնտռում...

Նախապէս աշխարհն ունի իր սպեկիֆիկ պայ-
մանները, որոնք նպաստում են դժբախտ դէպ-
քերի բազմաթիւութեան, մարդկային գոհերի չա-
տանալուն: Այսպէս, օրինակ, 1895 թ. տեղի են
ունեցել 38 դժբաղդ դէպքեր, 1896 թ.—48,
1897 թ.—91. զբանցից մեռել են 1895 թ. 14
հոգի, 1896 թ.—14 եւ 1897 թ.—25: Առհա-
սարակ իւրաքանչիւր հազար բանուորին գա-
լիս է:

Մահացութիւն դժբաղդ դէպքից . . . 2,1
Աշխատ. ընդուն. բոլորովին կորցնել. . . 1,1
Աշխատ. ընդունակ. մասամբ կորցնել . . 11,5
Ժամանակաւոր անընդուն. աշխատելու 213,—

Ընդամենը . . . 227,7
Ուրեմն բանուորական ընդհանուր թիւի 1%-ից
աւելին ենթարկվել է դժբաղդ դէպքերի:

*) Այս եւ հետեւալ թուերը վերցրել ենք ցուցա-
դրած դիպրամիւնների:

արմատաբերութեան տակ գիշերփայ ժամը 3-ին»։

ՆՈՐ-ԱՅԱՏԱՅԻՑ մեզ գրում են. «Բր պաշտօնավարութեան մէջ առանձին եռանդ եւ գովելի գործունէութիւն է ցոյց տալիս տեղիս գաւառապետի աւագ օգնական պ. Ս. Ղորղանեանը, որը ահա մօտ վեց ամիս է կառավարում է գաւառը, գաւառապետ չը լինելու պատճառով։ Մեր գաւառում, շնորհիւ պ. Ղորղանեանի, այժմ սպանութեան եւ գողութեան դէպքերը բոլորովին քչացել են. բացի դրանից, նա առանձին ուշադրութիւն է դարձնում եւ մեր քաղաքի բարելաւութեան վրա. օրինակ, քաղաքում ջրանցք անց կացնելու գործի աշխատութիւնը պիտի վերադարձնէր նրան։ Պ. Ղորղանեանը աշխատող չէ անում եւ քաղաքիս այլ գին. նրա ջանքերով շուտով ստացվելու են մօտ 500 ծառատունկեր Դարաշէյպի անտառից մեր այգու համար, որտեղ հէնց հիմայ պատրաստվում են ծառատունկերի համար գետնափոխեր։ Երանի պ. Ղորղանեանը նշանակվել էր մեզանում գաւառապետ»։

ՔԱՐՎԱՆԱՍԱՐԱՅԻՑ մեզ գրում են. «Հոկտեմբերի 18-ին եկաւ ուսումնարանների տեսուչ Բաղդասարը եւ մեր գիւղը։ Տեսաւ, որ ուսումնական ամիսների երկուսը անցնում է, բայց գիւղացիք երեխայ չեն ուղարկում ուսումնարան, որովհետեւ հարկերը ետապակովի են. օրինակ առաջ հարկ էին վճարում 900 ր., այժմ 3000 ր., այսպէս որ այլ եւս չեն կարողանում երկդասեան դպրոցի պահպանութեան համար, բացի թոշակադրամներից, վճարել նաեւ 500 րուբլի, վառելիք եւ ծառայ. Տեսուչը ժողովի կանչեց գիւղացիներին, որոնք մերժեցին որ եւ է առաքարկութիւն»։

ՊԵՏԵՐՈՒՄԻՐԻՑ մեզ գրում են. «Պանայիկի թատրոնում տօնեցին դրամատուրգ Պաշխիսի յօրելեանը։ Պաշխիսի ստացաւ թանկագին ընծաներ. կարգացվեցին ճառեր եւ ձօներ։ Միայն մենք հայերս էինք անտարբեր մնացել դէպի տաղանդաւոր ռուս դրամատուրգը, մինչդեռ նրա հնգիստութիւններից քիչ չենք օգտվել թէ՛ մենք եւ թէ՛ մեր գերասանները։ Միթէ մի հեռագրով կարելի չէր պատուել յարգելի դրամատուրգին»։

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԱՄԱԿ ՊԱՐՍՎԱՍՏԱՆԻՑ

Թաւրիկ, հոկտեմբերի 10-ին

Օղիի գործածութիւնը սարսափելի մեծ չափեր է ընդունում պարսիկների մէջ։ Առանց սխալվելու կարելի է ասել, որ նրանց ամեն շրջանում տարածված է այդ ախտը, իսկ տարածողները հայերն են։ Եթէ այստեղ, Պարսկաստանում՝ օգնվածառութիւնը գաղտնի չը լինէր, եթէ օգնվածառութիւնը երկիւղ չը կրէին մօլլաների, սելիքների յարձակումներից եւ ամբողջի վայրագութիւնից, հաստատ կարելի է ասել, որ հայ արհեստաւորների մեծամասնութիւնը այդ կեղտոտ աշխատանքն աւելի նախապա կը համարէր, որովհետեւ աւելի հեշտ եւ շատ օգուտ է տալիս։ Շատ քիչ գերձակ կայ, որ իր խանութի ներսում խմիչքեղէնի պահեստ չունենայ, որը ցանկացողին հէնց խանութում խմելու է տալիս։ Կան ամերկավաճառի խանութներ, որոնք իսկապէս օղեկաճառներ են։ Այս ձեւի օգնվածառութիւնը դեռ ոչինչ, հրէշաւորն այն է, որ շարունակվում է, նոյն իսկ աւելի լայն ծաւալ է ստանում այն ցուալի, եթէ չասենք զգուշի իրողութիւնը, որ ամեն ընտանիքի մէջ, նոյն-իսկ ամօթխած հայ կինն է օղի վաճառում, խմիչք մատուցանում պարսիկ օրկաններին... Սալտանակ բանի իսկ եթէ կինն էլ չի երեւում, այդ մի եւ նոյն է, որովհետեւ հարեցողները այն սենեակին են լցվում, որը կից է ընտանիքի ապրած սենեակին...

Փող ենք աշխատում, ասում են նրանք։ Բայց ինչ գնով, արպիսի անգիտակից զոհողութեամբ են աշխատում այդ փողը... Իրանց ընտանիքը բարոյապէս այլանշակելով։ Զարմանալի անզգայ մարդիկ են նրանք. արծաթի փայլը կուրացրել է նրանց, թոյլ չը տալով իրանց ընտանիքի փճանալը, բարոյապէս ընկնել տեսնել։ Օ՛հ փող են աշխատում... Երեւակայեցէ՛ք մի ընտանիք, փողերի երեխաներ, որոնց ականջի տակ, հարեւան սենեակից, կամ հէնց իրանց մօտ միշտ հնչում են հարբած օրկանների լիւր խօսքերը, կեղտոտ հայոյնանքները, զգուշի կատակները, կոբէները...

Շատ պարզ է, որ մանուկ հոգիները ընտելանում են դրանց, եւ ապա փչանում, անբարոյական դառնում։ Այս ինչ գնով են փող աշխատում. ահա թէ ինչիւ համար թողնելով իրանց հալալ աշխատանքը, այդ կեղտի մէջ են խրվում, որպէս զի շալլ ապրեն, որպէս զի ստոր միջոցներով ձեռք բերած փողերով կանանց զարդերը շատացնեն եւ հարեւանների մօտ հպարտանան, նրանց նախանձը չարժեն իրանց լաւ դրութեան վրա։

Մի քանի յայտնի փողոցներում (հայոց բերանած թաղերում) օղեկաճառները այնքան շատացել են, որ մօտին ընկնելուց յետոյ այնտեղով անցնելը վտանգաւոր է, որովհետեւ հարբած բազմութիւնը վրտում է, կոբէներ սարքում, անց ու դարձ անողին հայոյնում, նոյն-իսկ վրաւորում։ Նոյն իսկ իրանք՝ օղեկաճառներն էլ յաճախ երթակայ են լինում վտանգների, կոբէների, տուգանքների... Բայց չեն խառնվում, փող են աշխատում։ Ստորեւալ պարսիկ օրկանների առաջ, մասնակցել նրանց կեղտոտ կատակներին, ենթակայ լինել նրանց լարիշ ակնարկներին, ընտանիքի բարոյականութիւնը վտանգի մէջ դնել, միայն մի քանի կօպէկ ստանալու համար եւ ասել փող ենք աշխատում... զղջելի է։

Բայց գոնէ խղճացէ՛ք մանուկ հոգիներին, ազատեցէ՛ք նրանց բարոյապէս մեռնելուց, խնայեցէ՛ք հայ կնոջ ամօթխածութիւնը։

Ընտանիքից դուրս տարէ՛ք այդ կեղտոտութիւնները։

Փարբո

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԻՐ

—Պրանսիական «Siècle» լրագիրը հաղորդում է, թէ Տուլոնի զինարաններում նկատվում է այժմ վերին աստիճանի եռանդոտ գործունէութիւն։ Կարճ ժամանակից յետոյ Պրանսիական կուղարկէ թիւրքական ջրերը մի հակապական ծովային ուժ, որ կը ստիպէ թիւրք կառավարութեանը այստեղից։ Աւելի ուշադիր լինել դէպի Պրանսիան եւ նրա պահանջները։

—Այն, ինչ որ չը կարողացաւ անել եւրօպական մեծ պետութիւններից եւ ոչ մէկը վերջ դնելու համար հարաւ-արեւմտական պատերազմին, պատրաստվում են անել հօլանդացի բանուորները։ Արտասահմանեան մամուլի օրգաններից մի քանիսը նախապէս աղոթութիւն են գուշակում բանուորների ձեռնարկութեանը, որ հետեւեալն է։ Յայտնի է, որ Անգլիայի ոյժը նրա ծովային առեւտրի մէջ է։ Հօլանդացի բանուորները մտածում են համաձայնութիւն կայացնել եւրօպական զորքերի հետ։ Պրանսիական բանուորները միութիւններին հետ եւ ընդհանուր ոյժերով հալածանք յարուցանել անգլիական նաւերի դէմ, հրաժարվելով նրանց համար որ եւ աշխատանք կատարելուց։ Այս մտքով նրանք հրատարակել են մի կոչ եւ ուղարկել Եւրոպայի, Տուլոնի, Համբուրգի, Գիսնիայի, Նեապոլի եւ եւրօպական միւս նշանաւոր նաւահանգիստների բանուորական միութիւններին։ Բելգիական, ինչպէս նաեւ Ֆրանսիական բանուորները արդէն միացել են հօլանդացիների ցանկութեանը։ Որովհետեւ է հայրածանք անգլիական նաւերի դէմ սկսել առաջիկայ յունկարի 1-ին։

—Պարիզից հեռագրում են «Indépendance Belge» լրագիրին. «Արժանահաւատ արցիւրից հաղորդում են, որ ներկայ օրպէսմ տեղի են ունենում բանակցութիւններ Պերսիանայի, Աւստրիայի եւ Իտալիայի մէջ այժմ գոյութիւն ունեցող առեւտրական դաշնագրութիւններ վերանորոգելու մասին։ Ասում են, թէ Իտալիան յայտնել է, որ ոչ մի դէպքում չի միանայ այլ եւս Գերմանիայի եւ Աւստրիայի քաղաքական դաշնակցութեանը, եթէ նախօրոք չեն քննվի առեւտրական դաշնագրի ներքին եւ երբ նոր դաշնագրից չեն տալ նրան աւելի արտօնութիւններ քան նա ունէր մինչեւ այժմ գոյութիւն ունեցող դաշնագրերի գործութեամբ։

—«National Review» տպագրել է մի հետաքրքրական յօդուած, որ վերաբերում է Անգլիայի միջազգային քաղաքականութեանը։ Մատնանիշ անելով այն հանգամանքը, որ Գերմանիան յայտնի թշնամութեամբ է վերաբերվում Անգլիային, յօդուածագիրը կարծիք է յայտնում յօգուտ Անգլիայի, Ռուսաստանի եւ Եւրոպայի մերձեցման, որի հետեւեալը կը լինէր Մեծ-Բրիտանիայի եւ Պրանսիայի յարաբերութիւնների բարելոմը։ Բարեկամ պետութիւնների այս խմբի կարող էին միանալ Իտալիան եւ Պորտուգալիան Իբրեւ հիմունք համաձայնութեան Ռուսաստանի, Անգլիայի եւ Եւրոպայի մէջ կարող էր ծառայել այն, որ Անգլիային թոյլ կը տրվէր գերակշռող դերը բանի մասնէի հովտում, Ռուսաստանին՝ Մանջուրիայում եւ Մոնղոլիայում, իսկ Եւրոպային՝ Կորէայում։ «Times» լրագիրը, հաստատման մէջ բերելով «National Review»-ի, իր կողմից լրելել համակարգ է յայտնում յօդուածագրի մտքին։

—Այն յուզմունքը, որ ծագել էր անգլիական

հասարակութեան մէջ զենեակալ Բուլլերին պաշտօնից արձակելու պատճառով, մինչեւ այժմ չէ հանդարտվել։ «Manchester Guardian» լրագրի ասելով, զինուորականները այս առիթով բաժանվել են երկու կուսակցութեան։ Աւելի հասակաւոր օֆիցերները հաւանութիւն են տալիս կառավարութեան վարմունքին, իսկ երիտասարդները եւ զինուորները բռնել են հասարակութեան կողմը, որ ջերմ պաշտպան է Բուլլերին եւ համարում է նրան զինուորական միջնորդների Լաւոսունի եւ Բրոքրիկի գոն։ Նոյնը տեղի ունի եւ հասարակութեան մէջ. բարձր «գաւառագրեր» հակառակ են Բուլլերին, մասսան պաշտպանում է նրան։ Ամեն ինչ կախված է նրանից, թէ որքան ճարպիկ կերպով կը տան իր գործը Բուլլերի կուսակցութիւնը։ Այս պայքարը կարող է հիմնովին ցնցել զինուորական միջնորդները։ Զինուորական շրջաններում երկիւղ են յայտնում, որ զուր տեղը պատժված զենեակալ Բուլլեր կարող է խաղալ Դրէյֆուսի դերը Անգլիայում։

ՄՇԱԿԻ ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ԳՐԱՐԱՆԱԿԱՆ ԳՐԱՐԱՆԱԿԱՆ ԳՐԱՐԱՆԱԿԱՆ

23 հոկտեմբերի

ՊԵՏԵՐՈՒՄԻՐԻՑ. Հրատարակված է Բարձրագոյն հրաման Պետերբուրգի քաղաքային դուժայի ձայնաւորների եւ պաշտօնական անձանց ընտրութիւնները ժամանակաւորապէս դադարեցնելու մասին։

Ճանապարհ ընկաւ Վրտեբոկ արդարագատութեան միջնորդը։

ՕՐԻՍԱ. Կիւմից Ժամանց Մեծ Իշխան Կոնստանտին Կոնստանտինովիչ եւ այլեւց կաղէտների կորպուսը։

ՊԱՐԻՑ. Նախագահ Լուբէնի այցելեցին Ալէքսեյ Ալէքսանդրովիչ եւ Անդրէյ Վլադիմիրովիչ Մեծ Իշխանները եւ Լէյթենէնթէնտ Գեորգի, այցելութիւնից յետոյ իսկոյն Լուբէ փոխայցելութիւն տուեց Մեծ Իշխաններին։

ԴԵՆԱ. Տեղի ունեցաւ Բարձրագոյն բարեհաճութիւն սուլթանի պատմադրական հազար ռուբլի տալու զենեակաւորների արձանը կանգնեցնելու համար նրա Պէշաւայի գաւառի Մօկչանսկի գաւառի Սուլթանի գիւղում։

ԿՈՒՄԵՆԱԳԻՐ. Արքայական սեղանին հրաւիրված էին «Շտանդարտ» եւ «Սոլարնա Յեճճա» կայսերական լրագրողների հրամանատարները եւ օֆիցերները, որոնք այսօր գնացին Պետերբուրգ։

ՕՐԻՍԱ. Զինուորական դպրոցների այստեղ ժամանած Օգոստոսի ցիւլաւոր հրամանատար Մեծ Իշխան Կոնստանտին Կոնստանտինովիչ տեսաւ կաղէտների կորպուսը եւ իւնկերները դպրոցը։ Այսօր Նորին Բարձրութիւնը այցելեց կաղէտների կորպուսի շինութիւնների կառուցման տեղը։ Վաղը Մեծ Իշխանը ճանապարհ է ընկնում Օրշաւայից։

ԲԱՐՈՒ. Բագուի վրայով անցան Թիւրքիայի պարսկական դեսպան պրինց Միրզա Բիգա խան Արֆա-ուլազով եւ Պետերբուրգի պարսկական դեսպան Միւշի-իւ-միւլէ հանգուցեալ Ծաֆի երկու մանկահասակ որդիների եւ միջնորդների որդիների հետ, որոնք Վիեննա են գնում իրթութիւն ստանալու համար։

ՄՈՍԿՎԱ. Պրանսիական հիւպատոսութեան մէջ կատարվեց արձաթի եւ հազուստների գողութիւն խողր գումարի Գողը հիւպատոսութեան քաղաքային վերակրօնով, նրա ցիւլնորով եւ նրա անձնակազմի զուրու եկաւ տան անգուղիք եւ գնաց կառքով։

ՄՈՍԿՎԱ. Այսօր նախագահական դատարանը, քննելով Ս. Ի. Մամանովին անանի յայտարարելու հարցը, վճռեց վերադնաւորել նրա գողը։

ՕՐԵՍԱ. Իշխանուհի Լիւբով Ալէքսանդրովնա Արամիւլէ 7500 ր. նուիրեց իրան անուանական կազմակերպութեանը համարձակ թշկական ֆակուլտետին կից։

ԳԱԼԻՅԱՆԱ (Նոր Շաղանդի)։ Թնդանօթանից զօրքի 300 մարդիկ վեց թնդանօթներով ներկայ մասվայ ընթացքում կերթան հարաւային Աֆրիկա։

ԼՈՆԴՈՆ. Բօքսերը իրանց հետն ատան երկու թնդանօթ, որոնք պատկանում էին Բէնսօնի վերջնագահ գնդին։ Կոնստանտին 6 ժողն հետո բօքսերը, Վանգզերտէնի հրամանատարութեամբ, յանկարծակի յարձակում գործեցին 17 մարդուց բաղկացած զօրաբաժնի վրա եւ զերի ատան նրան։ Վանգզերտէն գաղութներում խօսեց այն բանի մասին, որ Կապի բօքսերը չեն օգնում իրան։ Բօքսերը գիտեն, որ անկախութիւնը վերականգնելու յայտն էր կայ, բայց շարունակվում են կոբել այն նպատակով, որպէս զի Կապի բօքսերին, իրանց նախկին բարեկամներին, խիստ զգացնել տալ այժմեան զրութիւնը։

ԲԵՐԼԻՆ. Արեւելեան ասիական արշաւախմբային զօրաբաժնի վերադառնալու առիթով կայրը հրաման արձակեց զօրքի մէջ, որի մէջ ամենալիակատար եւ ամենաշինք չորհրդակալութիւն է յայտնում արշաւախմբային զօրաբաժնին։ Այդ զօրաբաժինը արդարացրեց այն սպանելիքները, որոնցով կայրը նրան ուղարկեց, եւ միացրեց նոր զաֆներին գերմանական զօրքի հին փառքին։ Հայրենիքը այդ գործողութիւնների մէջ պէտք է տեսնէ երաշխաւորութիւն այն բանի, որ նա գիտակից է իր բարձր ընդհանուր նպատակին, այն է իր բարօրութիւնը եւ կենքը զոհել միշտ եւ ամեն տեղ գերմանական պատերի եւ գերմանական իրաւունքի համար։

24 հոկտեմբերի

ՊԵՏԵՐՈՒՄԻՐԻՑ. Գնդապետ Սմալկին նշանակվում է Պետրոյի զինուորական նախագահների պաշտօնակատար։

ՄՈՍԿՎԱ. Եւրոպական երկաթուղու Բեռլին-Կոնստանտինով Կայարանների մէջ յօ 92 գնացքի վրա յարձակվեցին շարագործներ եւ սկսեցին պոկել վագոնների կնիքները եւ դռները կոտրատել։ Մատայոյնը ժամանակին գնացքը կանգնեցրին։ Գողերը անհետացան։ Յայտնեց, որ գողերը գիտաւորութիւն են ունեցել գնացքը խորտակելու։

ՕՐԵՆԱ. Տեղական քաղաքային վարչութեան մէջ տեղի է ունեցել մօտ 5000 րուբլու վատնում, որ կատարել է մի ծառայող Յայտնված է պրօկուրորին։

ՏԱՄԲՈՎ. Բաւական ձիւն եկաւ։ Հինգ աստիճան ցուրտ է։

ՍԱՐԱՏՈՎ. Խոր ձիւն եկաւ առաջին անգամ։

ԵՐՈՒՍԱԼԱՅ. Քրիստոսի գերեզմանի տաճարում կաթոլիկների եւ օրթօդոքների մէջ մեծ կռիւ պատահեց, որի ժամանակ մարդիկ վրաւորվեցին երկու կողմից էլ։ Հինգ հոգի ֆրանցիսկեաններից վրաւորված են վտանգաւոր կերպով։ Կուրի սկիզբը տուող պէտք է համարել կաթոլիկներին։ Դեռ մի քանի օր առաջ այս տեղի մօտ զօրք էր դրված, որպէս զի ընդհանրապէս առաջն առնէ, բայց վիճողների թիւը յանկարծ այնքան մեծացաւ, որ եղած զօրքը բաւական չեղաւ։

ԲԵՐԼԻՆ. Բէյլստագի նստաշրջանը քանի մօտենում է՝ այնքան աւելի հետաքրքրութիւն է շարժում մաքսային օսկազնի հարցը։ Մամուլի մէջ քննվում են կոմա Դենսօֆ-Պրիգ-րիշտէյնի հիմունքները, որ 1894 թուին, միւս պահպանողականների հակառակ՝ ձայն տուեց Ռուսաստանի հետ դաշնագրի կապելու օգտին։ Հայի բարձր մաքսի վերաբերմամբ Դենսօֆ խաբուսիկ բացատրութիւն տուեց. նրա կարծիքով՝ առեւտրական դաշնագրից միայն պայմանաւորութիւնների ժամանակ, հարկաւոր է, Ռուսաստանի նման, բաւականաչափ է կոպէտներ տալ լիազօրներին օգնական։ Այն հարցին, թէ կարող են տեղի ունենալ փոփոխութիւններ կայսերական բարձրագոյն պաշտօնեաների մէջ առեւտրական դաշնագրերի հարցի յարուցած կրիզիսի պատճառով Դենսօֆ յայտնեց, թէ ամենեւեւ չէ հաւատում այսպիսի փոփոխութիւնների։ Նրա խօսքով՝ Բիւլով կոմսը ամենայնաւոր անձն է Դերմանիայում, որ կարող է այս գործը գլուխ բերել։

ՎԻԵՆՆԱ. «Polit. Corresp.» լրագրում զետեղված է Բուդապէշտից ստացված տեղեկութիւն, որտեղ ասված է, թէ ունգարական քաղաքական շրջաններում մեծ բաւականութիւն պատճառեց «Россия» լրագրի յայտնած ցանկութիւնը՝ որ առաջ եւ ունգարական մամուլի մէջ յարաբերութիւնների աւելի բարեկցական լինելին։ Նոյն շրջաններում մեծ ցանկութիւն են գրում, որ Ռուսաստանի ազդեցիկ լրագրի այս կողմ լսելի լինէր եւ առաւ մամուլը, ազատապէս քննելով գործերի դրութիւնը Ունգարիայում՝ հրատարակել այնպիսի լուրեր տարածելուց, որոնց մէջ հերքվում է ունգարական պետութիւնը եւ սրա կատարած ինքնապաշտպանութեան որ եւ գործ զուրս է բերվում իբրեւ ռոնակալութիւն, Այս տեղեկութիւնները թէպէտեւ տպվում են իբրեւ թէ բարեկամութեան պատրուակով դէպի առօնեւր՝ բայց այնու ամենայնիւ չեն պաշտպանում Ռուսաստանի եւ առաւ ժողովրդի շահերը։ Ունգարական շրջաններում ուրախութեամբ կողմնեն այն օրը՝ երբ առաւ հրապարակաւորները իրական հասկանալ, որ իրանց հաւատը ի չարն են գործ դնում։

ՊԱՐԻՑ. Կալեար հեռագրով հաղորդում է, թէ հասաւ Միտիլենէ կղզին, առանց մանրամասնութիւնների մէջ մանկելու։ Հաւանօրէն

ճովագետը երեք նաւահանգիստ կը գրաւէ կղզում եւ կը տիրէ մաքսատներին: Զմիւռնայի մաքսատները գրաւելու կամ ցոյցը Արշիպապետի միւս կղզիներէ վրա տարածելու մասին խօսք չը կայ: Ուրիշ միջոցներ ձեռք կառնելն ալ ղէպընում, եթէ սուլթանը չը համաձայնի զիջումներ անելու: Այս մասին կարեարին արված են յայտնի լրագորութիւններ:

Խմբագիր՝ ԱԼԷՔՍԱՆԴՐ ՔԱԼԱՆՔԱՆ
Հրատարակիչներ՝ ԹԱԳՈՒՀԻ ՏԻԳՐԱՆԵԱՆ
ԻՍԱՀԱԿ ՄԷԼԻԻ-ԱՂԱՍԱԼԻԱՆ:

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԱՌԱՋԻՆ ՄԱՍՆԱՌՈՐ ՀԻՄՆԻԱՆՈՑ

Բ. ՆԱԽԱՍԱՐԴԵԱՆԻ

(Կուկիա, Վորոնոյի արձանի հանգիւյ)
ա մ ե ե օ ր, բ ա ց ի կ ի ր ա կ ի օ ր ե ր ի ց:
Ա Ռ Ա Յ Տ Ն Ե Ր Ը

Բ. Ն. Նախասարգեան—1—12 ժ. վարարութեան, վերահսկան (սիֆիլիս) և միջառն. հիւանդ. Կ. Մ. Զիլովանի—9—10 ժ. աչքի, ներքին և նարքային հ. Կ. Բ. Գզնիլի—12—1 ժ. ախանջի, քթի և կուկի հ. Զ. Բ. Բարանովսկի—11—12 ժ. կանանց և երեխայաց հիւանդ. Ա. Պ. Կարապետեան—1—1/2 ժ. ներքին և երեխայաց հ.

Ե Բ Ե Վ Ն Ե Ր Ը

Ն. Ն. Ռոստոմեկով—5—6 ժ. վարարութեան և մարթի հ. Ա. Ն. Եսայակովի—6—7 ժ. նարքային (երեխայացի), վերքի և մարթի հ. Գ. Ա. Բարանովսկի—7—7 1/2 ժ. ներքին և երեխայաց հ. Բ. Ա. Նախասարգեան—7 1/2—8 ժ. Գար 50 կ. չքաւորները ձրի չափաւորի (կոնսիլիումի) և օպիւմիսի համար առանձին: Օ. Յ. Ասլանբեկով—տանը, ծաղկահատ և բոլոր կանան մարմնամարդ. գիւղի 11—1 ժ. Զիւլիանցի վերահսկող: Բժօկապետ ՆԱԽԱՍԱՐԴԵԱՆ:

Ա.ՏԱՄԵԱՐՈՅԺ

Լեռն Կարապետեան

Դարձանում է առանձին, չիւում է պլոմբներ, ոսկէ պսակներ արձանների վրա նստացնելու եւ կեղծ առանձին ոսկէ եւ կառչուկէ պլաստիկաների վրա: Ընդունում է հիւանդներ ժամը 9-ից առաւօտեան մինչեւ ժամը 7 երեկոյեան: Սոյալակայա փողոցի վրա, տուն Միրզոեփի № 6. 6—30

ԴԵՊԻ ՍՈՒՐԲ ԷԶՄԻԱՆԻՆ

գրքի ապագործիւնը վերջանում է: Պատասխանում են կիլիկներ Արշակ Կայծունի 3—3

Պետերբուրգի բժշկական վարչութեան թուրաւութեանը Մեծ արկղիկը 5 ռուբլի, փոքրը—3 ռ. եւ 1 ռ. 50 կ.:



ՆՈՐ ՄԻՋՈՑ

ժողովրդի բուժանոցը եւ ամբողջութեամբ համար, ոչնչացնում է թեփր. Դուրս է եկել նաեւ բուժանոցին նոր միջոց

ՁՈՒԹ ԿԱԹԸ

երեւոյն քննութիւն եւ օպիւմիսիւն առաւ համար, օչնչացնում է արեւի պատճառով սեւութիւնը, մոռները, ապիւս և կառչուկն քննութիւն եւ օպիւմիսիւն: Այդ գները չափաւոր են. մեծ արեւակը, արկղիկի մէջ, 2 ռուբլի, փոքրը—1 ռ. 50 կ. Մարմնում են բոլոր պարֆիւմերակն եւ զեղալուծանական խանութներում: Գլխաւոր պահեստը գտնվում է Պետերբուրգում, Պուլկովսկայա փողոց ա. № 15, քանակարան № 12. պահեստի բաժանմունքները գտնվում են. Թիֆլիսում կովկասեան զեղալուծան ասորանքների վաճառման ընկերութեան խանութում: Երեւանեան հրապարակ եւ նոր բաժանմունքում, Միքայելեան փողոց եւ Բազում. նաեւ Միքայելեան կառուցի վրա, Պապովի եւ Արիստակովի զեղալուծան: Օտարաբար զարգացնելու պատուէրները կատարվում են անմիջապէս պատասխանով: 86—100

ԱՐՏԻՍԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ՔԱՏՐՈՆ
Ուրբաթ, հոկտեմբերի 26-ին
Հայ դերասանական դրամատիկ ընկերութիւնը մասնակցութեամբ ա. ՍԻՐԱՆՈՅԻ
կը ներկայացնէ
ԿԵՍԱՆԻ ԱՐԺԵՔԸ
Դրամա 4 արար. հեղ. Նեմիրովիչ-Նանչենկովի, թարգմ. Ա. Մուրադբեկեանի
Մասնակցութեամբ են՝ ա. Ա. Եսայան, օր. Գուլազեան, ա. ա. Մայսուրեան, Սիրանոյշ, Փառսէն, պ. պ. Արիստակեան, Աղայեան, Բերոյեան, Պետրոսեան, Ռոյստեմի եւ Ստեփանեան:
Սկիզբն է հիշք ժամը 8-ին
Տեղերի գները իջեցրած են:

ԲԷԼԱՔԱՆ ԳԻՒՂՈՒՄ (Զաքար. չրջան)
ծախվում են ընտիր տեսակի պողպատու ծառեր, 1—2 տարեկան: Պայմանների մասին կարելի է տեղեկանալ Խոսրովի քարվանսարայում, № 62, Միւսա Աւագանից: 1—4

ԴԱՇՏԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆԻ ԳՈՐԾԻՉՆԵՐԻ
Համաժողովի նիստերը տեղի կունենան հոկտեմբերի 25-ին, 26-ին եւ 27-ին, երեկոյեան 7 ժամին, Գիւղատնտեսական ընկերութեան շէնքերում մէջ: 1—3

Ա.ՏԱՄԵԱՐՈՅԺ
Օր. Մարեանի
ԵՐԱՍԱԶԱՆԵԱՆՑ
ԸՆԴՈՒՆՈՒՄ Է ՀԻՄՆԻՆԻՐԻ
Առաւօտեան ժամը 9—2
Երեկոյեան ժամը 5—7
Վանքի մեծ փողոց, տուն Մարտիրոսեանի: (հ. 4.) 16—60

ԳՈՒՏՏԵՆԲԵՐԳ
ԳՐԱԽԱՆՈՒԹՈՒՄ ՎԱՃԱՌՎՈՒՄ ԵՆ
Բժ. Ա. ԲՈՒԴՈՂԵԱՆԻ
Ով է յանցաւորը 15 4
Առողջ հոգին առողջ մարմնի մէջ 10 »
Կարիք եւ բարեգործութիւն . . . 15 »
Գեղձախտ (զօլօտուխտ) . . . 10 »
Մանկավարժական համապատասխան 15 »
Ժառանգութիւն եւ դատարանական 15 »
Լոյս տեսած վերեւ յիշված վեց գրքերի վաճառումից զոյգած արդիւնքը ամբողջովին յատկացվում է ապագային Ախալցխայում հիմնվելիք աշխատանքի օգտին:

Դիմել՝ Թիֆլիս. Կիշինի մագազին. «Գութենբերգ», Գ. Գալստյան, Լորիս-Մելիկեան, № 11. 2—3
Յայտնում են ի գիտութիւն հասարակութեան, որ Դիօրցովայա փողոցի վրա. պալատական այգուն կից գտնվող
Վ Ի Կ Տ Օ Ր Ի Ա
նամերները վերանորոգված, նոր կահաւորված եւ ամեն կերպ յարմարեցրած են իջեւանողներին համար:
4—10 Օհան Քեանդարեան



ԳԱՀԱՆՋԵՑԷՔ ԱՄԵՆ ՏԵՂ
Ի Ս Ո Ւ Մ
»ՕԻՕԲԻՆ« Մ. Վ. ԼԵՐԵՆԻՎԻ
գեղը օչնչացնում է կատարեպէս մի քանի օրում հնացած կոշտերը (մազոններ) եւ կունգները արմատով, միայն կառավարութեան հաստատած էտիկետով № 22473.
Մարմնում է Թիֆլիսում, Դեղատան Ապրանքների Առեւտրի Կովկասեան Ընկերութեան մէջ եւ Բազուի եւ Բաթումի բաժանմունքներում: 10—10

Հիւսկառար Բառարան Ռուսերէնից Հայերէն
(ПОЛНЫЙ РУССКО-АРМЯНСКИЙ СЛОВАРЬ)
Մօտ 100 ապագրական թերթից (1600 երես), երկօրէնակ, սիւնեակը 64 տող: Կազմեց
ՅԱՐՈՒԹԻՆ ԴԱՂԱՇԵԱՆ
Մամուլի տակ է եւ լոյս կը տեսնի պրակներով (ВЫПУСКАМИ). Պարունակում է առաւելագուրի իրական բառապաշարը, ունի իրական շեշտադրութիւն, բազմաթիւ ուղղութիւն օրինակներ (նոյնպէս շեշտերով) եւ քերականական ցուցումներ Անկանոն բայերը խոսարած, իսկ անկանոն բայերը հարկած են:
Բացված է բաժանորդագրութիւն: Բաժանորդագիրն է 5 ռ. 50 կ. կանխիկ վճարելու: Ծանկացողը կարող է սկզբում միայն 3 ռ. վճարել, իսկ մնացածը՝ յետոյ: Առաջին պրակը (160 երեսից) լոյս կը տեսնի երեք ամսով ընթացքում: Բաժանորդագրութիւնը ընդունում է «Գուտտենբերգ» գրաքանդակարանը, Թիֆլիս, Լորիս-Մելիկեանսկայա լ., № 11, եւ հեղինակը, Թիֆլիս, Արմանսկայա Ներսիսյան Տեմինարի. 3—5

КОНКУРСЪ
по составленію эскизнаго проекта народнаго дома имени Константи-на Яковлевича Зубалова, въ г. Тифлисъ.
Комитетъ по постройкѣ народнаго дома въ г. Тифлисъ, состоящій при тифлисскомъ обществѣ трезвости, объявляетъ конкурсъ для всѣхъ желающихъ на составленіе эскизнаго проекта народнаго дома на слѣдующихъ условіяхъ:
1) Народный домъ предположено построить въ X участкѣ г. Тифлиса, на углу Кирочной и Великокняжеской улицъ, на участкѣ мѣроу 563 кв. саж. Участокъ безъ покатоности, горизонтальный. Ширина улицъ—пять сажень. Ширина тротуаровъ—два арш. Длина фасадовъ участка: по Кирочной улицѣ—23,82 саж., а по Великокняжеской—23,6 саж. Планъ участка составленъ городскимъ землемѣромъ Ларионовымъ.
2) Народный домъ долженъ вмѣстѣ съ собою: а) залъ со сценой на 600 человѣкъ; залъ этотъ долженъ служить для сценическихъ представленій, чтеній, а также для танцевальныхъ, дѣтскихъ и т. п. собраний. При сценѣ должны имѣться всѣ необходимыя помѣщенія, связанныя съ сценическими представленіями: уборныя и т. п. Помѣщенія эти могутъ быть расположены и подъ сценой; б) чайную на 200 человѣкъ; в) читаль-ный залъ на 50 человѣкъ съ отдѣльными помѣщеніями для библіотеки и книжнаго скла-да; г) помѣщеніе для сторожей. При проектированіи должно имѣть въ виду расширеніе зданія въ будущемъ устройствомъ народноі столовой съ кухней.
3) На постройку дома ассигновано насѣдниками К. Я. Зубалова семьдесятъ тысячъ рублей.
Фасадъ съ главнымъ входомъ примыкаетъ непосредственно къ улицѣ. Фасадъ по другой улицѣ долженъ отступать на четыре сажени для устройства садика. Между зда-ніемъ народнаго дома и границами сосѣднихъ участковъ должны быть оставлены проѣз-ды минимальной требованіи стр. уставомъ ширины.
4) За лучшіе проекты насѣдники К. Я. Зубалова устанавливаютъ двѣ преміи: въ пятьсотъ и триста рублей. Преміи эти будутъ выданы по постановленію особаго жири въ Тифлисъ, гдѣ состоится конкурсъ. Въ члены жири не будутъ входить ни жертвовате-ли, ни члены комитета, и рѣшеніе названнаго жири по присужденію премій будетъ окон-чательное.
5) Конкурсъ можетъ состояться только по представленіи не менѣе трехъ проек-товъ, при чемъ жири имѣетъ право признать конкурсъ несостоявшимся, если найдетъ представленныя проекты неудовлетворяющими требованіямъ, предъявляемымъ къ народ-нымъ домамъ вообще, или по другимъ причинамъ.
Жири имѣетъ право подраздѣлить первую премію на двѣ равныя или неравныя части по своему усмотрѣнію, если изъ представленныхъ проектовъ не найдетъ достоянаго первой преміи. Составъ жири будетъ объявленъ по образованіи его.
6) Всѣ премированные проекты поступаютъ въ полную собственность комитета. Непремированные проекты могутъ быть приобрѣтены комитетомъ по свободному соглаше-нію послѣдняго съ авторами ихъ, если таковое приобрѣтеніе признано будетъ желатель-нымъ комитетомъ.
7) Автору перваго премированнаго проекта, а за отказомъ его—автору втораго ко-митетъ предложитъ разработку окончательнаго проекта по постройкѣ дома съ правомъ пользоваться всѣми премированными проектами, при условіи внесенія въ эскизные про-екты всѣхъ измѣненій, какія найдетъ нужными комитетъ. Вознагражденіе за этотъ трудъ комитетъ назначаетъ въ размѣрѣ 10/100 съ ассигнованныхъ 70,000 руб. Что касается тех-ническаго надзора за производствомъ работъ по постройкѣ, то выборъ лица для этого всецѣло зависитъ отъ насѣдниковъ К. Я. Зубалова, принимающихъ на себя всецѣло хо-зяйственную и финансовую сторону осуществленія постройки, съ участіемъ одного чле-на комитета по выбору послѣдняго.
8) Эскизный проектъ долженъ состоять изъ фасадовъ, плановъ, разрѣзовъ—въ ус-тановленномъ масштабѣ, съ пояснительной запиской и краткой сисѣтой.
9) Конкурсъ состоится въ г. Тифлисъ, при чемъ всѣ проекты должны быть пред-ставлены не позже 12 часовъ дня 2 февраля 1902 года на имя члена комитета Георгія Михайловича Туманова по адресу: г. Тифлисъ, Баятинская улица, домъ кн. Туманова. Всѣ чертежи, записки и смѣты должны быть ясно помѣчены девизомъ или зна-комъ. Подъ тѣмъ же девизомъ или знакомъ представляется въ нахулоу запечатанномъ конвертѣ—званіе, имя, отчество и фамилія автора, а также его подробный адресъ.
10) Преміи выдаются комитетомъ въ двухдѣльный срокъ со дня объявленія ко-митету рѣшенія жири.
11) Жири имѣетъ право пригласить въ свои засѣданія по оцѣнкѣ проектомъ всѣхъ лицъ, коихъ оно найдетъ полезными для себя, но безъ права голоса.
12) Желающіе участвовать въ конкурсѣ могутъ получать копіи плана мѣста и другія свѣдѣнія отъ Георгія Михайловича Туманова.
13) Непремированные проекты возвращаются авторамъ по предъявленіи распи-сокъ почтовыхъ или выданныхъ комитетомъ, безъ вскрытія конвертовъ. Р. 3—3



Կ օ ճ ֆ է տ ի ե լ Ե օ կ օ լ ա դ ի
գ ո թ ա թ ա ճ
„Փ. Ն. ՓՐԻԴՈՆԵԱՆ“
ԹԻՖԼԻՍՈՒՄ
Առաջարկում է թարմ կարամել մրգեղանից, մոնպանսե, մարմելադ, պաստիլա, զեֆիր եւ այլն:
Պատուէրներով զիմել գործարան. Պալ-լովկայա փողոց, սեփական տուն, տէլե-ֆօն № 362.
Սեփական գործարանական խանութը գտնվում է Մէլզանում, եղբ. Հէջուբեանների տանը, տէլեֆօն № 772.
Մեր ապրանքները ծախվում են բոլոր կոյունիական խանութներում:
Բազուի եւ Բազուի գաւառի համար ներկայացուցիչ է Նիկ. Սամարչեանց, Մի-քայելեան փող., տ. Աշումեանի:
70—100